

Մատենադարանի եւ Թանգարանի անունով ստացուած նուէրներ:

Ուրախութեամբ յիշատակում ենք այն մարդկանց անունները, որոնք զսնազան նուէրներով նպաստում են ճոխացնելու Մայր Աթոռի երկու կարևորագոյն հաստատութիւնները՝ Մատենադարանն ու Թանգարանը: Մենք, հաւանական, շուտով առիթ կունենանք ընդարձակօրէն դրելու այդ հաստատութիւնների մասին, առ այժմ աւելորդ չենք համարում յիշելու, որ վանքի մէջ կան երկու թանգարան և երկու մատենադարան. թանգարան է կոչուում տաճարի արևելեան մասում Գէորգ Գ. կաթողիկոսի ձեռքով շինել տուած շինութիւնը, որը, ինչպէս ուրիշ առիթի նկատել ենք, աւելի յարմար է Մատենադարան կոչել և դրա համար միայն պէտք ածել, ու բուն թանգարանը, որ շինել է տուել Աղբիս Վեհախառն Հայրապետը Բագուեցի հանգուցեալ Առաքել Ծատուրեանի նուիրած զբամով: Այդ քարեայ հոյակապ շինութիւնն ունի երեք ընդարձակ բարձր սենեակ, մէկը միւս երկուսին հաւասար և բաժանուած է մի նրբանցքով: Այդտեղ՝ երկու սենեակում տեղաւորուած են այլ և այլ հնութիւններ, Մայր տաճարից վերցրած և ուրիշ նկարներ. իսկ ընդարձակ սենեակումն են վանքի ձեռագիր և տպագիր զբեքերը: Նրկորդ մատենադարանը ձեմարանինն է: Այդ հաստատութիւնները կառավարող յատուկ վարչութիւն կայ, որը մտածում է որոշ ծրագրով բաժանել մատենադարանի մատնադիտական մասը միւս գործածական սովորական մասից; Մասանց Խորանից հանել ոչ եկեղեցական հնութիւնները և տեղաւորել նորակառոյց թանգարանում, պատրաստել հայերէն և օտար լեզուներով տպագրած ուղղեցոյցներ և ցուցակներ, որպէսզի այցելուներին զիւրութիւն տրուի ուսումնասիրելու հետարբեր հնութիւնները:

Կատարուելիք գործի մաս պիտի համարել պարբերաբար հրատարակել տեղեկութիւններ նուէրով կամ այլ կերպ ձեռք բերած իրերի մասին: Պէտք է նկատած, որ մինչև օրս նուէրներ ստացուել են անխաիր մատենադարանի կամ թանգարանի անունով, ուղղուած զսնազան անձանց: Նուիրատուները երբեմն ստացել են շնորհաւորական նամակներ, երբեմն ոչ, միայն քիչ անգամ է Արարատի միջոցաւ ստացածի մասին տեղե-

կութիւն տպագրուել: Այդ, խոստովանում ենք, զանցառութիւն է, որի վնասը քաշել են ամենից առաջ յիշեալ հաստատութիւնները: Կարիք չկայ ստելու, երբ նուիրատուն հաւաստիանում է, որ իւր ընծայած իրը ծառայել է խկահան նպատակի, մխիթարում է հոգեպէս և նրա արածից ուրիշներն էլ են օրինակ առնում, մի կողմ թողած որ բարոյական պարտք է հանրական նպատակի համար ստացած ամենախոքը նուէրները մասին հրապարակական հաշիւ տալ:

1. Աւարատի անցեալ համարներից մէկում (էջ 344) խօսելով Մայր Աթոռի Մատենադարանի մասին, յիշատակել էինք խոչոր նուիրատուների անունները և նկատել, որ ձեմարանի ամենարժէքաւոր և նշանաւոր մասը ստացուած է համարեա բացառապէս Մեծ. Կ. Եղեանի ձեռքով, որը տարիների ընթացքում շարունակ հետամտել է ձեռք բերելու եւրոպական լեզուներով հայադիտութեան վերաբերեալ լոյս տեսնող նշանաւոր աշխատութիւնները և պարբերաբար մեզ ուղարկել: Յունիսի չորսին դրած նամակով նա յայտնում է մեզ, որ նորից երեք արկղ է ուղարկում էջմիածին, երկուսը լի գրքերով, երրորդի մէջ հանգուցեալ Մ. Սանատրեանի կիսարձանը, որը պիտի արուի ձեմարանի մատենադարանի մէջ: Պ. Եղեանը բացի այդ, տարւոյս սկզբին մի գրութեամբ յանուն Վեհափառ Հայրապետի երեք թանգադին մատանի էր ուղարկել էջմիածին, երեքն էլ ատամանդեայ: Նրա մասնաւոր ցանկութեամբ մատանիներից երկուսը մնալու են Վեհափառի տրամադրութեան տակ, երրորդը՝ Գէորգ Գ. կաթուղիկոսից իրեն նուիրուած «իբրև յիշատակ Մեծ Հայրապետի բարեգութ ու շաղրութեան և իմ (Պ. Եղեանի) առ նա տածած որդիական պատկառանաց» ուղարկուած է անկորուստ պահելու Մայր Աթոռի թանգարանի մէջ: Վեհափառ Հայրապետը յարգելով նրա խօսքերը, պատուիրեց այդ մատանին անցնել թանգարանի մատեանի մէջ և տեղաւորել թանգադին իրերի պահարանում: Նոյնութեամբ տպագրում ենք Պ. Եղեանի Վեհափառին ուղղուած գրութիւնը:

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Տ Է Ր

Երջանկայիշատակ Գէորգ Գ. կաթուղիկոսն Երբ 1867 թուին Պետերբուրգ էր այցելել իւր ազգօգուտ առաջար-

կութիւնքը ներկայացնելու տէրութեան և բանակցելու կարևոր հարցերի մասին, ինձ կհրաւիրէր ի ի որհրդակցութիւն և ի դործակցութիւն: Պետերբուրգէն մէկնելիս՝ հանդուցեալ կաթուղիկոսը պարզեց ինձ ի խրախոյս իմ ջանից, իւր պատկերը և ականակուռ աղամանդեայ մի մատանի, զոր մեծ ակնածութեամբ ցարգ պահպանած եմ: Այժմ, երբ ծերութեան հասակին եմ հասած, պարտք և պատշաճ կհամարեմ այդ մատանին ի մշտնջենական պահպանութիւն յանձնել Սուրբ Էջմիածնի թանգարանին, իբրև յիշատակ մեծ հայրապետի բարեգութ ուշադրութեան և իմ առ Նա տածած որդիական պատկառանաց: Ուստի, կինդրեմ որ Չերդ Վեհափառութիւնը անօրինէ որ իմ այդ փափագը անխափան կատարուի:

Ընդ սմին ուղարկում եմ ի նուէր թանգարանին երկու աղամանդեայ մատանի, որ հարիւր տարիէն աւելի մեր ընտանեաց մէջ կմնային:

Մատչելով ի համրոյր օրհնառաք Աջոյն Չերդ
Վեհափառութեան մ'նամ խոնարհ որդի

Կար. Եզեան

Պետերբուրգ

Յունուար 8, 1903.

2. Երկու ասրի առաջ Բագուում և Թիֆլիզում ստացել եմ մի քանի ձեռագիրներ, որ մինչև օրս Մատենադարանին չէի յանձնել ցանկանալով ուսումնասիրել, մանաւանդ նրանցից մէկը, մի ընտիր Պատարագամատոյց: Այդ գիրքը՝ նուէր Պ. Սեմէն հայրապետեան Հախումեանի (Ժամանակի խմբագրի լոկ անուանակիցը) մագաղաթեայ մանրանկարներով և խորաններով դարգարած ձեռագիր է, միջակ մեծութեամբ, գրուած գեղեցիկ բոլորգրով Հայոց Պե (1356) թուին, Գրիգոր Սուրբասեանցի ձեռքով, «Տիրացու քահանային ի վայելումն»: Մեր Մատենադարանում ձեռագիր խորհրդատետրերի թիւը 20-ից աւել է, ամենահինը փ: դարուց: Պ. Հախումեանի նուիրած օրինակը անգլիանիին է իւր հնութեամբ և այնպիսի գեղեցիկ ընթերցուածներ, աչքի ընկնող խոշոր տարբերութիւններ ունի, որ եթէ մեզ չյաջողուի ամբողջութեամբ տպագրել, անպատճառ կանք

նրա ուսումնասիրութիւնը: Այսպիսի հազուադիւրա ձեռագրեր երևան դալը մասնաւոր անձանց մօտ, մասնագէտներին պէտք է յոյս ներշնչի, որ մեր մէջ կարող են ձեռագրահան ուրիշ գիւտեր էլ տեղի ունենալ:

3. Պահաս հետաքրքրական չէ միւս ձեռագիրը, պարսկալեզու հայտառ մի Աւետարան, որ մենք ստացել ենք Թիֆլիզում Պ. Աղէքսանդր Մելիք—Աղարեանից: Աւետարանը պարսկերէն թարգմանուել է նոր—Չուղայում, որտեղ Հայոց գրահանութիւնը Ժ: դարի սկզբներում կարճատե, բայց շատ մեծ չափերով ծաղկեց: Մեր ունեցած օրինակը, որ պարունակում լինւ չորս Աւետարանը, գրուած է նօսր գրով հասարակ թղթի վրայ և ունի հետևեալ յիշատակարանը.

«Որ ի ռմիւր (1779) ես տէր Միքայելս գրեցի օրինակէ լուսասահի հաքիմ Ակորին որ գրեալ ի քաղաք Շօշ ի վաղուց ժամանակէ յառաջ ժամանակով և մեք գրեցաք սուրբ Աւետարանս ի քաղաքն Գանձայ ի հայրապետութեան Տեառն Սիմէօնի և ի տանս Աղուանից Տեառն Իսրայելի. որոյ յիշատակն օրհնեալ եղիցի»:

Նոյն յիշատակարանը գրուած է նաև գրքի սկզբում, որի մէջ գրելը ինքն իրեն կոչում է «Աստապատցի, որ եմ Գանձայ բնակեալ»: Աւնի նաև պարսկերէն յիշատակարան և գրքի սկզբում տաս թղթի վրայ պարսկերէն ընդարձակ գրութիւն աշխարհի ստեղծագործութեան և Ադամի մասին: Իմ իմացածով այս ձեռագիրը պարսկերէն հայտառ Աւետարանի թարգմանութեան առաջի օրինակն է:

4. «Նկարագրութիւնք ինչ ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի Հայոց դաղթելոց ի Տայո: Նաբադրեալ յազգասիրէ յումեմնէ ի Տիֆլիս 1841. եւ այժմ դազափարեցաւ ի Մկրտիչ վարդ. Եկիմեան ի 1852 սեպտ.»», Բազուքաղաքում ինձ յանձնեց իբրև նուէր Մայր Աթոռի Մատենադարանին բժիշկ Գարբիէլ Յովհաննիսեան (Գաջբերունի): Այս ձեռագիրը մի պիեսա է հինգ «Նկարագրութեամբ» (գործողութիւն) և ունի հետևեալ բովանդակութիւնը: Ախալցխայի Կարապետ եպիսկոպոսը կաշառներն շնորհիւ ստացել է Թիֆլիզի առաջնորդութիւնը և իւր ձեռնասուն տիրացուներով ու վարդապետներով շրջապատուած ուղղեւորում է թեմը «կառավարելու»: Նա իւր առաջնորդութեան վրայ նայում է միայն մի ատեսակէտից, թէ որքան արգիւնք պիտի ստանայ, որքան կաշառներ պիտի ժողովի, որպէսզի թէ իւր քսակը լցնի, իւր տուածները վերագարձնի և թէ սինողում ծառայողներին, ու անդամներին գոհացում տայ:

Պիեսը մասամբ տաղտկալի երկարութիւններով, տեղ տեղ ակըն-
 յայտանի չափադանցութիւններով Յովհաննէս Կարնեցի կաթուղի-
 կոսի ժամանակուայ հոգևոր վարչութիւնների նկարագիրն է
 տալիս, երբ առաջնորդները թեմերը ստանում և կառավարում
 էին ուղիղ այնպէս ինչպէս այժմ տաճկահայ փաշաները և
 պարսկահայ խաները իրենց նահանգները: Կարապետ Եպիսկո-
 պոսը սակարգութեամբ փողեր է ստանում տիրացուներից, ե-
 րեցփոխներից, ուխտատեղերից, չհաս պսակներից, վանքական
 կալուածներից, քահանաներին պարգևներ բաժանելուց՝ նոցա մի
 եկեղեցուց միւսը փոխադրելուց, բացի այդ ամեն դէպքում էլ
 պատուիրում է անմասն չթողնել իւր փոքրւորներին: Պիեսը հե-
 տաբքեր է նաև լեզուի կողմից. ամեն մէկը խօսում է իւր բար-
 բառով, Եպիսկոպոսը Ախալցխայի բարբառով, թիֆլիզեցիները
 իրենց լեզուով, վարդապետների նամակները գրաբարով: Պիեսի
 մի մասը գրուած է սասնաւորով:

5. «Հայ աշուղներ և երգիչներ ժողովածու բժշկապետ
 Գէորգ Ախվերդեանի» այս տարի հրատարակուած «Հայ Աշուղ-
 ներ» գրքի բուն ձեռագիրն է, որ բժշկապետի Մանեայ գուս-
 տըրը ուղարկել է Մայր Աթոռի Մատենադարանին «անկորուստ
 մնալու ղիտաւորութեամբ»: Ձեռագիրը բաղկացած է 1108
 էջից, գրուած է զանազան մեծութեամբ թերթիկների վրայ
 տարբեր գրիչներից, միայն մի մասը իւր բժշկապետի ձեռքով
 պարունակում է Պ. Հախվերդեանի ժողովածուն ամբողջութեամբ,
 որից «Ազգագրական Հանդիսի» խմբագրութիւնը ընտրութիւն
 է կատարել իւր վերջի հրատարակութեան համար:

6. Մի հատ ձեռագիր Մաշտոց վերջին օրերս նուէր տուեց
 Խոջաւուզ զիւղացի (Էջմիածնի գաւառ) Վարդան տէր Աբրա-
 համեանը: Ձեռագիրը գրուած է ըղորդորով հաստ թղթի վրայ և
 ծաղում է հաւանականաբար ժ.Ձ դարուց, պահուած է բաւա-
 կան անմաքուր, ծխոտուած և սկզբից ու վերջից էլ մաշուած է:

7. Պ. Զարէհ Խ. Սարաջեան, Պօլսի Գիւլպէնկեան առևտրա-
 կան տան ներկայացուցիչը Պարսկաստանում Ս. Էջմիածնի 1600
 ամեակի առթիւ Հայոց Հայրապետանոցի համար մի շատ գե-
 ղեցիկ ընծայ է բերել. ապշեշումեայ պարսկական մի գորգ
 խորհրդաւոր նկարներով և մակագրութիւններով զարգարուած:
 Գորգի մեծութիւնը երկու քառակուսի մետր է, մէջ տեղում
 Մայր տաճարի նկարը, գործուած բնական գոյներով: Տաճարի
 տակը նուրբ և մեղմ գոյներով նկարուած է վանքի բակը, զար-
 դարուած կանաչ ծառերով: Գմբէթների պերսպլիկտիւի մէջ կան
 անձաւորութիւններ, իսկ դրա փոխարէն տաճարը շրջափակող և

պարսկական ճաշակով նկարուած զարդը շատ զեղեցիկ է: Այդ զարդը, բաղկացած մի քանի շերտերից քառակուսի շրջափակով, շորս անկիւններում ունի հետեւեալ մակագրութիւնները. վերեւում՝ «Աուրըն Տրդա», «Աուրըն Գրիգոր Լուսաւորչի», ներքեւում՝ «303» «1903»: Տաճարի անունը գրուած է տաճարի տակը «Էջմիածին», իսկ զարդի վերեւի շերտի մէջտեղում կայ հայկական զինանշան: Պ. Զարէհ իւր այդ գեղեցիկ և յիշատակելի ընծան պատրաստել է առել Խորասանում և անձամբ հսկել աշխատասրները Վրայ, նրա մտագրութիւնն է եղել Էջմիածնի տօնին այստեղ հասցնել, սակայն մի քանի շաբաթ ուշացել էր և այստեղ կարողացաւ դալ միայն ամսիս սկզբին:

Մեսրոպ Վարդապետ



ՄԱՐԻՅՍ

(Շար. հո 534)

- 70) Վերացաւ Պարսից և Բարեւացւոց թագաւորութիւնը. Աղէքսանդր տիրեց
- 71) Բարեւաստանի վրայ և նուաճեց աշխարհը. նա իշխեց Երուսաղէմի (քնազրում եղած 3 տառը—Ուր(ուշալիմ) լրացնելու է) և Արքունիայի և Մուրիայի վրայ և դրաւեց ամբողջ
- 72) Ասիան, անցաւ հնդկական գետը և նուաճեց Հնդկաստան և Հարէշտան:
- 73) նա տիրեց Յուդայի վրայ և ոչ միայն Հրեաների հետ խիստ չվարուեց, այլ և զոհ մատուցեց Աստուծուն.
- 74) և վերջապէս իւր ծառաներից մէկը թոյն խմեցրեց նրան և նա մեռաւ: Դարեն որք հաւե Որդի Արեւիկայ է կոչում:
- 75) Աղէքսանդրից յետոյ բաժանուեցաւ (նրա) թագաւորութիւնը 4 մասերի
- 76) և յետոյ 10 մասերի. այսպիսով կատարուեցաւ Դանիէլի մարգարէութիւնը